Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 04.10.2023թ. չորեքշաբթի թիվ 40-41 (1117-1118)

Վիրավոր Հայրենիք

Կոչ սթափության

Պահանջո՛ւմ եմ, իբրեւ ձեր եղբայրը, իբրեւ ձեզանից մեկը, պահանջո՛ւմ եմ, խնդրո՛ւմ եմ, հերի՛ք է, հերի՛ք է միմյանց բզկտեք, հերի՛ք է մեզ պատուհասած դժբախտությունների պատճառները միմյանց մեջ փնտրեք. օտարը մեզ դավաճանում է, թշնամին հարվածում է, մեր հայրենիքը կրկին գերեվարում է, մեր ժողովրդին կրկին ցեղասպանում է, իսկ մե՞նք... Մենք միմյանց մեջ դավաճաններ ենք փնտրում, միմյանց ենք դարձնում հանցագործներ... Եթե անգամ հազար դավաճան էլ լինի մեր մեջ, այդ նա՛ չէ ծրագրել, իրագործել այն, ինչ եղավ, նա կարող է լինել փոքրոգի, վախկոտ, եսասեր, տգետ, անշնորհք, անգամ 30 արծաթով ծախվող հուդա, բայց նա՛ չէ մեր թշնամին, նա՛ չէ մեր դեմ 1000 տարի մենակ, 300 տարի իր դաշնակցի հետ պատերազմ մղողը, մեզ ցեղասպանողը, մեր հայրենիքը դատարկողը, մեր երկիրը կործանողը... Դավաճաններին միշտ էլ կարելի է պատժել, բայց հիմա միմյանց ու մեր հայրենիքը պաշտպանելո՛ւ ժամանակն է, օտարին հետ մղելո՛ւ, թշնամուն հարվածելո՛ւ ժամանակն է, աշխարհով մեկ, ամենուրեք, ամեն զենքով ու միջոցով... Հիմա ամբողջ զայրույթը, խռովքը, ատելությունը, վրեժը թշնամու վրա ուղղորդելո՛ւ ժամանակն է:

Հայաստանի Հանրապետության իշխանությո՛ւն, իրավասու մարմիննե՛ր, կազմակերպությունն՝ե՛ր, խնդրո՛ւմ եմ ձեզ, իբրեւ Հայաստանի անկախության համար դույզն պայքար մղած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, պահանջո՛ւմ եմ՝ անել հնարավորը, անգամ անհնարինը, անգամ անձնական զրկանքների գնով, ամեն բան, որ մեր բռնի տեղահանված արցախցի հայրենակիցներն արժանապատիվ բնակություն հաստատեն Հայաստանի Հանրապետությունում, չհեռանան Հայրենիքից, չգնան որեւէ այլ երկիր...

Սիրելի՛ արցախցիներ, որպես ձեր հայրենակիցը, որպես ձեզանից մեկը, հորդորո՛ւմ եմ, խնդրո՛ւմ եմ, եթե հարկ կա, ներե՛ք մեզ, եթե մեր մեջ կան տգետներ, անտեսե՛ք նրանց, ինչ էլ որ լինի, մի բան ավել, մի բան պակաս, չլքե՛ք ձեր Հայրենիքը, մնացեք Հայաստանում... Գիտեմ՝ բոլորդ եք ձգտում, երազում վերադառնալ ձեր ծննդավայրը՝ դրախտավայր Արցախ, բայց, հավատացե՛ք, ողջ Հայաստանն է դրախտավայր, եւ բոլոր հայերն են արցախցի՝ բառիս դրական իմաստով... Իսկ ձեր երազանքի՛ ճանապարհը, վերադարձի՛ ճանապարհը անցնում է միայն Հայաստանի միջով... Ապրե՛ք Հայաստանում, դարձե՛ք Հայաստանի լավագույն սովորողները, լավագույն մասնագետները, լավագույն գիտնականները, լավագույն զինվորականները... մեր երկրի լավագույն քաղաքացիները: Դուք միշտ էլ այդպիսին եք եղել, մնացե՛ք նույնը. շենացրեք մեր Հայրենիքը, հզորացրե՛ք Հայաստանը, ապահովե՛ք մեր վերադարձը Արցախ...

Կա քարերը հավաքելո՛ւ ժամանակը, կա քարերը նետելո՛ւ ժամանակը. հիմա քարերը հավաքելո՛ւ ժամանակն է:

Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ

Ի գիտություն

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցները ՀՀ հանրակրթական դպրոցներում տվյալ պահին առկա ազատ տեղերի մասին տեղեկատվություն կարող են ստանալ **license.emis.am** հարթակի միջոցով:

Հավելյալ խնդիրների եւ հարցերի դեպքում նրանք կարող են դիմել ՀՀ մարզպետարանների եւ Երեւանի քաղաքապետարանի ոլորտային վարչություններ, ինչպես նաեւ Հայաստանի 60-ից ավելի համայնքներում Կառավարության կողմից ստեղծված Տարածքային հումանիտար կենտրոններ կամ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ, որտեղ մասնագետները համապատասխան ուղղորդում կիրականացնեն՝ տվյալ բնակավայրի դպրոցների եւ լիցենզիայով սահմանված ազատ տեղերի վերաբերյալ:

Հիշեցնենք՝ ԿԳՄՍՆ կողմից հանրակրթական ուսումնական հաստատություններին ուղարկված շրջաբերական-հանձնարարականի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների ընդգրկումն ուսումնական հաստատություններում պետք է իրականացվի գործող իրավակարգավորումներով, մասնավորապես՝ 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված՝ *«Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու եւ ազատելու կարգի»:*

Ըստ այդմ՝ բնակավայրի միակ դպրոցում երեխաներն ընդգրկվելու են՝ անկախ տվյալ հաստատության՝ լիցենզիայով սահմանված տեղերի թվից: Մի քանի ուսումնական հաստատություններ ունեցող բնակավայրերում երեխաների ընդգրկումն իրականացվելու է ազատ տեղեր ունեցող հաստատություններում, իսկ տվյալ բնակավայրում դրանք ամբողջությամբ համալրված լինելու դեպքում, կրկին առաջնորդվելով երեխայի լավագույն շահով, փաստացի բնակավայրի մոտակա հաստատությունում՝ անկախ լիցենզիայով սահմանված տեղերից:

* * *

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչները կարող են իրենց տվյալները ներկայացնել ԿԳՄՍ նախարարություն՝ **secretariat@escs.am** էլեկտրոնային հասցեով:

Տվյալների հավաքագրումից հետո կկազմակերպվեն լրացուցիչ աջակցության ծրագրեր՝ նրանց ընդգրկումը կրթական համակարգում ապահովելու նպատակով:

Տեղեկատվության համար կարող եք զանգահարել ԿԳՄՍ նախարարության թեժ գիծ՝ **(010) 59-96-00:**

Շնորհավորանքի խոսք

Սիրելի՛ ուսուցիչներ,

Շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Դուք արժանի եք լավագույնին: Հաղթահարելով բոլոր դժվարությունները՝ դուք շարունակում եք կրթել ու դաստիարակել հայ ազգի ապագա սերնդին: Ձեր համբերատար եւ անձնուրաց աշխատանքի շնորհիվ տասնամյակներ շարունակ մեծացել է հայրենասեր, ազգասեր սերունդ:

Դարեդար շարունակվել է ուսուցչի դժվարին աշխատանքը եւ կշարունակվի: Այսօր բազում են ուսուցչի առջեւ ծառացած դժվարությունները, բայց դուք պատվախնդրությամբ իրականացնում եք ձեր աստվածահաճո վեհ կոչումը:

Մաղթում եմ ձեզ առողջություն, ընտանեկան բարեկեցություն, հոգեկան անդորր եւ սեր, անսահման սեր:

Գրիգոր ՂԱՐԻԲՅԱՆ
ՀՀ կրթության եւ գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ծյուղային հանրապետական միության նախագահ

Շրջաբերական

Բռնի տեղահանված երեխաների կրթության կազմակերպման վերաբերյալ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը շրջաբերական գրություն է ուղարկել Երեւանի քաղաքապետարանին եւ ՀՀ մարզպետարաններին՝ առաջարկելով իրենց ենթակայությամբ գործող դպրոցներին իրազեկել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների կրթության կազմակերպման վերաբերյալ:

Շրջաբերականում, մասնավորապես, նշվում է. *«ԼՂ հազարավոր ընտանիքներ բռնի տեղահանվում են Հայաստանի Հանրապետություն՝ ունենալով համակողմանի աջակցության եւ հոգատարության կարիք: ՀՀ կառավարությունը հոգում է բռնի տեղահանված ընտանիքների պաշտպանության, կեցության, առաջնային անհրաժեշտության պայմանների հարցը, որոնք ապահովվելուն զուգընթաց՝ պետք է ձեռնարկվեն նաեւ կրթության տարբեր աստիճաններում ընդգրկված երեխաների կրթության իրավունքի իրացման համար անհրաժեշտ քայլեր: Պետք է հաշվի առնել, որ այդ ընտանիքները եւ, հատկապես երեխաները, գտնվում են բարդ հոգեբանական վիճակում, եւ այս փուլում կարող են դժվարությամբ կայացնել երեխաների դպրոց գնալու որոշումը՝ հաշվի առնելով առկա անորոշությունները եւ կայուն կեցության հետ կապված դեռեւս կարգավորելիք հարցերը: Այդուհանդերձ, պետք է լինել նախաձեռնող եւ հետեւողական՝ անընդհատ կապի մեջ լինելով տվյալ տարածքի միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների հետ, ակտիվորեն տեղեկանալ տվյալ բնակավայրում գտնվող եւ դպրոց չհաճախող երեխաների մասին՝ նրանց օր առաջ ուղղորդելով հաճախել դպրոց»:*

Համաձայն շրջաբերականի՝ երեխաներին դպրոց ընդգրկելու նպատակով դպրոցներին հանձնարարվել է իրականացնել հետեւյալը.

- Ապահովել երեխաների ընդգրկումն ուսումնական հաստատություններ՝ անկախ անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունից:

- Երեխաների ընդգրկումն ուսումնական հաստատություններում իրականացնել գործող իրավակարգավորումներով, մասնավորապես՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու եւ ազատելու կարգի» համաձայն՝ հաշվի առնելով, որ բնակավայրի միակ դպրոցներում երեխաներն ընդգրկվելու են՝ անկախ տվյալ հաստատության՝ լիցենզիայով սահմանված տեղերի թվից: Մի քանի ուսումնական հաստատություններ ունեցող բնակավայրերում երեխաների ընդգրկումն իրականացվելու է ազատ տեղեր ունեցող հաստատություններում, իսկ տվյալ բնակավայրում դրանք ամբողջությամբ համալրված լինելու դեպքում՝ կրկին առաջնորդվելով երեխայի լավագույն շահով, տվյալ բնակավայրի մոտակա հաստատությունում՝ անկախ լիցենզիայով սահմանված տեղերից:

- Բոլոր երեխաներին ապահովել անհրաժեշտ դասագրքերով:

- Օտար լեզվով ուսուցմամբ դասարաններում երեխաների կրթության շարունակականության համար որոշում կայացնել գործող իրավակարգավորումներով եւ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի (լեզվական) գնահատման եզրակացությամբ:

- Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից, ըստ անհրաժեշտության, իրականացնել սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների գնահատման եւ աջակցության տրամադրման գործընթաց:

Համաձայն շրջաբերականի՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը եւ կրթության գործընթացում համակողմանի աջակցության անհրաժեշտությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ոլորտում ակտիվ գործընկերների հետ համատեղ կնախաձեռնի եւ կիրականացնի հետեւյալ առանձին ծրագրերը.

- Հոկտեմբերին մեկնարկելու են ուսուցիչների վերապատրաստումները՝ ստեղծված իրավիճակում սովորողներին դասապրոցեսում եւ դպրոցական միջավայրում սահուն եւ առանց լրացուցիչ ցնցումների ներգրավվելու պայմաններ ստեղծելու համար:

- Սովորողներին, ըստ անհրաժեշտության, ցուցաբերվելու է հոգեբանական եւ կրթական աջակցություն՝ հաշվի առնելով, թե ինչ հանգամանքներում են հայտնվել եւ որքան ժամանակով է ընդհատվել նրանց կրթությունը: Այս հարցի կարգավորման համար անհրաժեշտ է սերտ աշխատել ուսումնական հաստատությունը սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ: Բոլոր այն հաստատությունները, որոնք արդեն իսկ համալրել են հոգեբանի հաստիքները, այս աշխատանքներում պետք է ակտիվորեն ներգրավեն նաեւ դպրոցական հոգեբաններին:

- Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվելու ավարտական դասարանների սովորողներին՝ վերջիններիս համար հնարավորինս շուտ կրթական գործընթացին միանալու եւ իրենց հետագա մասնագիտական կողմնորոշման առումով աջակցություն տրամադրելու առումով: Անհրաժեշտության դեպքում նրանց համար կկազմակերպվեն լրացուցիչ կրթական ծառայություններ՝ բաց թողնվածը լրացնելու համար:

Այս ծրագրերի մանրամասների վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հավելյալ տեղեկատվություն կներկայացնի:

«ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը պլանավորում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների՝ հետագա ուսուցչական աշխատանքում ներգրավման առանձին ծրագիր՝ նպատակ ունենալով ապահովել ուսուցիչների մասնագիտական աշխատանքի հնարավորությունը ՀՀ դպրոցներում: Այս մասին նույնպես կտրվեն լրացուցիչ տեղեկություններ՝ ուսուցիչների տվյալների հավաքագրումից եւ ամփոփումից հետո»,- նշվում է շրջաբերականում:

Նույն շրջաբերական-գրությունն ուղարկվել է նաեւ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների եւ ոչ պետական դպրոցների, ինչպես նաեւ *«Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն»* հիմնադրամի, *«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»* եւ *«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն»* ՊՈԱԿ-ների տնօրեններին:

ՀՀ ԿԳՄՍՆ
հասարակայնության հետ կապերի
եւ տեղեկատվության վարչություն

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողները կարող են իրենց կրթությունը շարունակել ՀՀ բուհերում եւ քոլեջներում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի կողմից շրջաբերական գրություն է ուղարկվել բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ղեկավարներին:

Շրջաբերականում, մասնավորապես, նշվում է. *«2023 թվականի սեպտեմբերի 19-ից Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ բռնի տեղահանված ուսանողների կրթության շարունակականությունն ու անընդհատությունն ապահովելու նպատակով առաջարկվում է այդ ուսանողներին, իրենց դիմումների համաձայն, ներգրավել ուսումնական գործընթացներում՝ կցագրելով համապատասխան մասնագիտությամբ (կրթական ծրագրով) համապատասխան կուրսերում: Ուսանողները պետք է կցագրվեն՝ անկախ դիմելու պահին փաստաթղթերի առկայությունից, տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար լիցենզիայով սահմանված տեղերի քանակից, կրեդիտների տարբերությունից (առարկայական տարբերություններից ու ակադեմիական պարտքերից)՝ ըստ անհրաժեշտության ցուցաբերելով իրավիճակային կամ անհատական մոտեցում»:*

Համաձայն շրջաբերականի՝ բուհերը պետք է վարեն նշված ուսանողների հաշվառում՝ մեկշաբաթյա պարբերականությամբ տվյալները ներկայացնելով Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե՝ հետագայում փաստաթղթավորումն ու լիարժեք ներգրավումն ապահովելու համար:

«Մինչեւ քննաշրջանի սկիզբն անհրաժեշտ քայլեր կձեռնարկվեն՝ համապատասխան փաստաթղթերի առկայությունն ապահովելու, ինչպես նաեւ ուսանողների տեղափոխության գործընթացներում, ըստ անհրաժեշտության, նոր կարգավորումներ սահմանելու ուղղությամբ: Քննարկվում են նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների աջակցության ծրագրեր, որոնց վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն»,- նշված է շրջաբերականում:

Բուհերին առաջարկվել է կրթական գործընթացին զուգահեռ դիտարկել նաեւ տեղահանված ընտանիքների ուսանողների ինտեգրման, հոգեբանական եւ կրթությանն առնչվող հավելյալ աջակցության ծրագրեր եւ ոչ ֆորմալ կրթական նախաձեռնություններ իրականացնելու հնարավորությունները՝ բուհի համապատասխան ստորաբաժանումների միջոցով կամ համագործակցելով այլ բուհերի հետ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը շրջաբերական գրություն է ուղարկել նաեւ նախնական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ղեկավարներին:

Շրջաբերականում, մասնավորապես, նշված է. *«Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրադրությամբ պայմանավորված՝ բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության շարունակությունն անհրաժեշտ է կազմակերպել ՀՀ-ում ուսանողի բնակության վայրի ամենամոտ (համայնք կամ մարզ) ուսումնական հաստատությունում իր ուսումնառած մասնագիտությամբ՝ տվյալ մասնագիտության համար լիցենզիայով հատկացված տեղերի թիվը չգերազանցելու պայմանով: Լիցենզիայով հատկացված տեղերի թիվը գերազանցելու դեպքում ուսումնական հաստատության կողմից պետք է խորհուրդ տրվի համայնքի կամ մարզի այլ հաստատություն, որտեղ առկա է ուսանողի ուսումնառած մասնագիտությամբ թափուր տեղ: Ուսանողի բնակության վայրի ամենամոտ (համայնք կամ մարզ) ուսումնական հաստատությունում լիցենզիայով հատկացված տեղերը գերազանցելու դեպքում ուսանողն իր ցանկությամբ կարող է դիմել հարակից մասնագիտությամբ՝ պահպանելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարի՝ 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 1278-Ն հրամանի հավելվածով հաստատված «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգի պահանջները:*

Համաձայն շրջաբերականի՝ վերոնշյալ պայմանների բացակայության դեպքում ուսանողի բնակության վայրի (համայնք կամ մարզ) ամենամոտ ուսումնական հաստատությունում իր ուսումնառած մասնագիտությամբ դիմելու դեպքում միայն կարող է գերազանցել տվյալ մասնագիտությամբ լիցենզիայով հատկացված տեղերի թիվը, կամ ընտրել այլ ուսումնական հաստատություն՝ այլ համայնքում կամ մարզում:

«Ուսանողի ուսանողական իրավունքի վերականգնման մերժման հիմք չի կարող հանդիսանալ վերականգնման կարգի պահանջներով անհրաժեշտ փաստաթղթերի բացակայությունը: Ուսանողի դիմումն ընդունելուց հետո անհրաժեշտ է նրան թույլատրել մասնակցելու ուսումնական գործընթացին եւ հնարավորինս սեղմ ժամկետում դիմել Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն՝ ուսանողին այլ ժամկետում վերականգնման համաձայնություն ստանալու համար: Ուսանողը հրամանագրվում է վճարովի համակարգում (ուսման վարձերի փոխհատուցման վերաբերյալ կտեղեկացվի լրացուցիչ)՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող դիմորդների»,- նշված է շրջաբերականում:

Ռոմանոս ՄԵԼԻՔՅԱՆ - 140

Կրկնակի հոբելյան

ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանն** այցելել է Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ: Նախարարի տեղակալը քոլեջի տնօրեն **Վարազդատ Խաչումյանի,** պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողների ուղեկցությամբ շրջել է ուսումնական հաստատության տարածքում, ծանոթացել լսարանների վիճակին, քոլեջի գործունեությանը, առկա գործընթացներին եւ խնդիրներին: Նախարարի տեղակալը շրջել է նաեւ Ռոմանոս Մելիքյանին նվիրված նորաստեղծ ցուցասրահի տարածքում, ծանոթացել ցուցանմուշներին եւ նյութերին:

Այնուհետեւ Դանիել Դանիելյանը ներկա է եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ *«Երեւանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի դերն ու նշանակությունը հայ երաժշտարվեստումե* խորագրով գիտաժողովի բացմանը: Այն նվիրված է Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի հիմնադրման 100-ամյա եւ Ռ. Մելիքյանի ծննդյան 140-ամյա հոբելյաններին:

Գիտաժողովը կազմակերպել էին Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը եւ Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը:

Նախարարի տեղակալը ողջունել է քոլեջի դասախոսներին, ուսանողներին եւ հյուրերին՝ նշելով որ մեծ հուզմունքով է 30 տարի անց ոտք դնում այն հաստատություն, որն իր կայացման գործում մեծ դերակատարում է ունեցել:



«Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջը հազարավոր մարդանց համար եղել է եւ մնում է այն օրրանը, որից սկիզբ է առնում մեծ եւ պատասխանատու ճանապարհի սկիզբը: Անգնահատելի է նաեւ Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ներդրումը հայ երաժշտարվեստում»,- նշել է Դանիել Դանիելյանը եւ վստահություն հայտնել, որ այս կարեւոր կրթօջախի պրոֆեսորադասախոսական կազմը կշարունակի կրթել եւ դաստիարակել այնպիսի սերունդ, որը երաժշտարվեստի, մշակույթի ոլորտում իր նշանակալի ավանդն ու ներդրումը կբերի մեր երկրին:

տե՛ս՝ նաեւ էջ 5

Բարեգործական նախաձեռնություններ

Մշակութային գործիչները հանդես են գալիս Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին աջակցելու նախաձեռնությամբ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության որոշ կազմակերպություններ հայտարարել են բարեգործական համերգների եւ ներկայացումների մասին:

Նախաձեռնության մեկնարկը տրվել է սեպտեմբերի 28-ին, *«Արամ Խաչատրյան»* համերգասրահում՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի Երեւանյան 15-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում: Բարեգործական համերգի մենակատարն էր անվանի հայ ջութակահար **Սերգեյ Խաչատրյանը,** դիրիժորը՝ **Ստանիսլավ Կոչանովսկին:** Ծրագրում հնչել է Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը եւ հատվածներ *«Սպարտակ»* բալետից:

Համերգի տոմսերի վաճառքից գոյացած հասույթը կուղղվի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների աջակցությանը:

Երեւանի պետական տիկնիկային թատրոնում ներկայացումների մուտքն ազատ է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների համար:

Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում կայացած *«Գծավորը»* ներկայացման մուտքն ազատ է եղել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների կրթամշակութային ժամանցի կազմակերպման նպատակով հայտարարել է անվճար ծառայություններ՝ շրջայց գրադարանում, հեքիաթապատում, տիկնիկային ներկայացման դիտում: Երեխաների խմբերի հերթագրման համար կարելի է զանգահարել՝ **(060) 27-11-38** հեռախոսահամարով:

Մշակութային հաստատությունների կողմից իրականացվող նմանօրինակ նախաձեռնությունները կլինեն շարունակական:

Վիրավոր Հայրենիք

Նախարարը հանդիպել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների հետ

Նախարար **Ժաննա Անդրեասյանն** Արարատի մարզի Ջորակ, Ռանչպար եւ Հովտաշեն համայնքներում հանդիպել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների հետ, որոնք հաճախում են տեղի հանրակրթական դպրոցներ: Նա զրուցել է երեխաների հետ եւ հույս հայտնել, որ սրտացավ մանկավարժների եւ աշակերտների օգնությամբ նրանք կկարողանան համակերպվել նոր միջավայրին ու ձեռք բերել նոր ընկերներ: *«Գիտենք, թե ինչպիսի դժվարությունների միջով եք ստիպված եղել անցնել, հասկանում ենք, որ կարոտում եք ձեր տունն ու դպրոցը: Միասին պետք է հաղթահարենք դժվարությունները: Իմացեք, որ դուք մենակ չեք. մենք մշտապես ձեր կողքին ենք եւ ձեզ շատ ենք սիրում»,-* ասել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանը զրուցել է նաեւ բռնի տեղահանված երեխաների ծնողների հետ, լսել նրանց անասելի դժվար ճակատագրերի վերջին օրերի պատմությունը:

Ջորակ համայնքի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցն այս պահի դրությամբ ԼՂ-ից բռնի տեղահանված շուրջ 20 երեխաների է ընդունել, թե՛ նախադպրոցական, թե՛ դպրոցական տարիքի, որոնք ընդգրկվել են տարբեր դասարաններում: 44-օրյա պատերազմից հետո դպրոցում նաեւ արցախցի երկու ուսուցիչ է աշխատում, այս պահին էլ երաժշտության ուսուցչի կարիք ունեն եւ հուսով են, որ իրենց համայնք տեղահանված մեր հայրենակիցների մեջ համապատասխան մասնագետ կգտնվի:

Երեխաներն ապահովվել են բոլոր անհրաժեշտ դասագրքերով, գրենական պիտույքներով: Մարզպետարանների պատասխանատուներն ու դպրոցների տնօրենները ԿԳՄՍ նախարարությունից շրջաբերական-հանձնարարություն են ստացել՝ հետեւողական եւ ուշադիր լինել բռնի տեղահանված երեխաների խնդիրներին՝ անընդհատ կապի մեջ լինելով տվյալ տարածքի միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների հետ: Դպրոցներն իրենց բնակավայրում գտնվող եւ դպրոց չհաճախող երեխաների մասին օպերատիվ տեղեկատվություն են ստանում՝ նրանց օր առաջ ուղղորդելով հաճախել դպրոց:

Նախարարը հետաքրքրվել է, թե երեխաներն ինչ նախասիրություններ ունեն եւ վստահեցրել, որ երաժշտության, արվեստի եւ սպորտի խմբակներ հաճախող երեխաներն այստեղ եւս կունենան այդ հնարավորությունը ու կշարունակեն զբաղվել իրենց նախընտրած ուղղությամբ:

Հայաստան մուտք գործած բռնի տեղահանված արցախցիներից յուրաքանչյուր երրորդը երեխա է: Նախարարի խոսքով՝ Արցախի 108 հանրակրթական դպրոցների շուրջ 21 հազար սովորողներից գրեթե բոլորն արդեն Հայաստանում են:

«Դպրոց ընդունվող երեխաների թիվն անընդհատ փոխվում, ավելանում է: Օպերատիվ կերպով լուծվում են նրանց դասագրքերով եւ գրենական պիտույքներով ապահովման հարցերը: Ինչպես գիտեք՝ մեր դպրոցներում նաեւ իրականացվում է «Դպրոցական սնունդ» ծրագիրը, որի շրջանակում 1-4-րդ դասարանների երեխաները հենց դպրոցում ստանում են տաք սնունդ: Այս ծրագիրը, իհարկե, գործելու է նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր երեխաների համար: Սա շարունակական աշխատանք է. պարզ է՝ առաջիկա օրերին դպրոց գնացող երեխաների թիվը պետք է մեծանա: Մենք պատրաստ ենք ընդունել բոլոր երեխաներին եւ լուծել ընթացիկ հարցերը»,- նշել է նախարարը:

Անդրադառնալով դպրոցներում լիցենզիայով սահմանված տեղերին՝ ԿԳՄՍ նախարարն ընդգծել է՝ բնակավայրի միակ դպրոցներում երեխաներն ընդգրկվելու են՝ անկախ տվյալ հաստատության՝ լիցենզիայով սահմանված տեղերի թվից: Մի քանի ուսումնական հաստատություններ ունեցող բնակավայրերում երեխաների ընդգրկումն իրականացվելու է ազատ տեղեր ունեցող հաստատություններում, իսկ տվյալ բնակավայրում դրանք ամբողջությամբ համալրված լինելու դեպքում՝ կրկին առաջնորդվելով երեխայի լավագույն շահով, տվյալ բնակավայրի մոտակա հաստատությունում՝ անկախ լիցենզիայով սահմանված տեղերից:

Ուսումնական հաստատություններ դիմելիս մեր հայրենակիցները փաստաթղթերի խնդիր չեն ունենա. երեխաների ընդունելությունը դպրոց կկատարվի՝ առանց լրացուցիչ փաստաթուղթ պահանջելու: Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ լրացուցիչ ծրագիր է մշակվում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների մասնագիտական աշխատանքի շարունակականությունն ապահովելու համար: *«Վստահ եմ՝ բոլորին կկարողանանք առաջարկներ անել, քանի որ մեր համակարգում կա ուսուցիչների պակաս, եւ բոլոր դպրոցներն էլ պատրաստակամ կլինեն ներառել նրանց»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

Այս համատեքստում Ռանչպարի միջնակարգ դպրոցի տնօրենը նշել է, որ ունեն ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի թափուր հաստիք: Տնօրենի խոսքով՝ Լեռնային Ղարաբաղից իրենց բնակավայր տեղահանված քաղաքացիների շրջանում նաեւ ֆիզկուլտուրայի ուսուցիչներ կան, այնպես որ կկարողանան աշխատանքի անցնել դպրոցում: Առհասարակ, դպրոցի տնօրենի խոսքով, նվազագույնը 50-60 դպրոցականի են ակնկալում ընդունել: Ընդ որում՝ 44-օրյա պատերազմից հետո Ռանչպարի միջնակարգ դպրոց տեղափոխված աշակերտներից 36-ը մնացել ու կրթությունը շարունակում է ստանալ իրենց դպրոցում:

Հովտաշենի միջնակարգ դպրոցում այս պահին 12 սովորող է ընդգրկվել. եւս 7-8 աշակերտ արդեն դիմել են եւ առաջիկայում կընդունվեն դպրոց: Երեխաներն ծանոթացել են իրենց նոր ուսուցիչների ու դասընկերների հետ, ստացել դասագրքեր, գրենական պիտույքներ:

Արարատի մարզպետարանն այս պահին ամփոփել է մարզի 112 դպրոցներից 107-ի տվյալները. ըստ այդմ՝ Արարատի մարզի 107 դպրոցներում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 370 սովորող է ընդգրկվել:

Արարատի մարզ այցի ժամանակ ԿԳՄՍ նախարարին ուղեկցել են ՀՀ Արարատի մարզպետարանի գլխավոր քարտուղար **Արթուր Մկրտչյանն** ու մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ **Մարտին Մանուկյանը:**

Աշխարհի հետ

Բռնի տեղահանվածների կրթության իրավունքի հարցը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանն** ընդունել է Հայաստանում ԵՄ պատվիրակության նորանշանակ ղեկավար, դեսպան **Վասիլիս Մարագոսին:** Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

ԿԳՄՍ նախարարը շնորհավորել է դեսպանին ՀՀ-ում դիվանագիտական առաքելության մեկնարկի կապակցությամբ եւ հաջողություն մաղթել նրան պաշտոնավարման ընթացքում: Ժաննա Անդրեասյանը վստահություն է հայտնել, որ երկուստեք ջանքեր կգործադրվեն դեսպանի պաշտոնավարման ընթացքում Հայաստան-ԵՄ հարաբերությունների ամրապնդման ու համագործակցության արդյունավետության բարձրացման համար:

«Ցավում եմ, որ մեր առաջին հանդիպումը տեղի է ունենում մեր երկրի համար այսքան բարդ եւ ողբերգական փուլում՝ Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակով պայմանավորված: Այս դժվարին օրերին ԵՄ-ն եղել է մեր կողքին, աջակցել ամենատարբեր եղանակներով»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ կարեւորելով շարունակական եւ արդյունավետ աշխատանքը:

«Այս պահին մենք աշխատում ենք կարճաժամկետ աջակցության ուղղությամբ՝ լուծելով մարդկանց տեղափոխման, առաջնային բուժօգնության, կացարանների տրամադրման, սննդի հետ կապված հարցերը: Զուգահեռաբար, աշխատում ենք միջնաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրերի մշակման ուղղությամբ, որոնց իրականացման գործում ունենալու ենք նաեւ մեր գործընկերների աջակցության կարիքը: Ինչ վերաբերում է բուն կրթական գործընթացներին, ապա, ինչպես գիտեք, Լեռնային Ղարաբաղում շուրջ 30 հազար երեխաներ էին բնակվում: Բռնի տեղահանված երեխաների համար, կեցության հարցերի լուծմանը զուգահեռ, կարեւոր խնդիր է կրթության շարունակականության ապահովումը: Երեխաները նաեւ որոշակի սոցիալ-հոգեբանական աջակցության եւ նմանօրինակ ծառայությունների կարիք են ունենալու: Մենք նրանց նաեւ պետք է հոգեբանորեն պատրաստենք դպրոց գնալուն, եւ այդ աջակցությունը շարունակենք կրթության ընթացքում»,- ասել է ԿԳՄՍ նախարարը՝ ընդգծելով, որ աստիճանաբար պետք է հասնել նրան, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների շրջանում պարտադիր կրթությունից դուրս մնացողներ չլինեն:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ կարեւորել Հայաստանի հետ համագործակցությունը: Դեսպանն իր մտահոգությունն ու անհանգստությունն է հայտնել ստեղծված իրավիճակի, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետագա անելիքների վերաբերյալ՝ կարեւորելով խաղաղ բնակչության հիմնարար իրավունքների ապահովմանն ուղղված քայլերի անհրաժեշտությունը:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Վասիլիս Մարագոսի հետ հանդիպմանը ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը դեսպանի ուշադրությունն է հրավիրել նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին՝ ընդգծելով, որ դրանք նաեւ համամարդկային արժեք են ներկայացնում եւ դրանց պահպանությունը հնարավոր է միայն միջազգային գործընկերների ջանքերի գործադրմամբ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ կրթության, գիտության, մշակույթի եւ երիտասարդության ոլորտներում Եվրամիության հետ իրականացվող ծրագրերը, Եվրամիության կողմից տրամադրվող աջակցությանը վերաբերող հարցեր՝ ծրագրային նախաձեռնություններն արդյունավետ իրականացնելու նպատակով:

ԵՄ պատվիրակության ներկայացուցիչներն ընդգծել են հատկապես երիտասարդության ոլորտում համագործակցության խորացումը՝ հույս հայտնելով, որ ավելի մեծ թվով հայ երիտասարդներ կներգրավվեն ԵՄ ծրագրերում, որոնք ուղղված են նաեւ Հայաստանի հեռավոր մարզերում երիտասարդների ակտիվության խթանմանը:

Ասուլիս

Ցուցաբերվող աջակցության վերաբերյալ

ԿԳՄՍ **Ժաննա Անդրեասյանն** ու ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար **Նազելի Բաղդասարյանը** Կառավարության *«Հումանիտար կենտրոն»*-ում հանդես են եկել մամուլի ասուլիսով եւ մանրամասներ ներկայացրել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին ցուցաբերվող աջակցության աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ *«Այս պահին առաջնահերթ են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների կեցության, բուժօգնության, սննդի մատակարարման ծրագրերը, սակայն կրթության իրավունքը նույնպես կարեւոր եւ առաջնային է: Հետեւաբար, մենք պետք է առանց ժամանակ կորցնելու իրականացնենք քայլեր՝ ապահովելու երեխաների շարունակական կրթությունը»:*

Նախարարը տեղեկացրել է, որ ԿԳՄՍ նախարարությունը շրջաբերական գրություն է ուղարկել հանրակրթական դպրոցների ղեկավարներին, որով հստակ հրահանգներ են տրվել գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

Մասնավորապես՝ ուսումնական հաստատություններ դիմելիս մեր հայրենակիցները փաստաթղթերի խնդիր չեն ունենա. երեխաների ընդունելությունը դպրոց կկատարվի՝ առանց լրացուցիչ փաստաթուղթ պահանջելու:

«Կարգավորումներ ենք նախատեսել նաեւ բոլոր այն դեպքերի համար, երբ երեխաները կունենան հավելյալ աջակցության կարիք, քանի որ հասկանում ենք՝ նրանք անցել են բարդ հոգեբանական փորձությունների միջով: Այդ աշխատանքն իրականացնելու ենք ոլորտում գործող մասնագիտացված կառույցների հետ: Մենք ունենք տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ, բոլոր մասնագետները պատրաստ են»,- ասել է Ժաննա Անդրեասյանը: Նա նաեւ տեղեկացրել է, որ հաջորդ շաբաթվանից ՀՀ դպրոցների ուսուցիչների համար կկազմակերպվեն վերապատրաստումներ՝ աջակցելու նրանց՝ հոգեբանական ծանր ապրումներով երեխաների հետ աշխատելու եւ նրանց համար համապատասխան միջավայր ձեւավորելու հարցում:

ԿԳՄՍ նախարարն ընդգծել է՝ այս պահին հաշվառված քաղաքացիների համադրությամբ կարելի է ասել, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներից ամեն երրորդն անչափահաս է:

«Սա նշանակում է, որ մենք դպրոցներում շատ անելիք կունենանք: Համագործակցում ենք ոլորտում գործող քաղաքացիական հասարակության ակտիվ կազմակերպությունների հետ եւ ունենալու ենք լրացուցիչ ծրագրեր, որոնք կվերաբերեն ինչպես սովորողների համար հավելյալ կրթական աջակցությանը, այնպես էլ՝ ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչներին: 2023 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղում գործել է 108 հանրակրթական ուսումնական հաստատություն՝ շուրջ 21 հազար սովորողներով: Ուսուցիչների թիվը եղել է շուրջ 1500: Մենք անընդհատ խոսում ենք ուսուցիչների պակասի մասին, այնպես որ վստահ եմ՝ մեր կրթական համակարգը պատրաստ է Լեռնային Ղարաբաղից տեղահանված ուսուցիչներին եւս ներգրավելու դպրոցներում՝ ըստ անհրաժեշտ ուղղությունների»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ կարիքների գնահատման փուլում ԿԳՄՍ նախարարությունը կլինի շատ ուշադիր, եւ բոլոր ծրագրերն ու նախաձեռնությունները կմշակվեն՝ ըստ ի հայտ եկած կարիքների:

Անդրադառնալով Հայաստան տեղափոխվող ուսանողներին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ թե՛ բուհերի, թե՛ քոլեջների եւ ուսումնարանների սովորողներն ունեն կրթության շարունակականության իրավունք: Լեռնային Ղարաբաղում գործել է 8 քոլեջ ու ուսումնարան եւ 4 բուհ:

«Մշակվել են կրեդիտների, տարբերությունների եւ դրանց փոխանցման ու ուսանողների տեղափոխության գործընթացների վերաբերյալ կարգավորումները: Լրացուցիչ քննարկում ենք նաեւ ուսման վարձի հետ կապված խնդիրները. այստեղ եւս կարիքների գնահատման ու լրացուցիչ առաջարկների անհրաժեշտություն է լինելու՝ հիմնվելով տվյալների վրա: Այս բոլոր հարցերին ավելի մանրամասն կկարողանանք անդրադառնալ այն ժամանակ, երբ մեր բոլոր հայրենակիցների տեղաբաշխումն իրականացված կլինի»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Խոսելով սպորտի եւ մշակույթի ոլորտում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների ներգրավման մասին՝ Ժաննա Անդրեասյանն ասել է. «Լեռնային Ղարաբաղում 11 մարզադպրոցներ են գործել՝ շուրջ 3 հազար սաներով: Կարծում եմ՝ թե՛ մարզիչների, եւ թե ստեղծագործական կոլեկտիվների աշխատողների հետ կտարվի հավելյալ աշխատանք՝ հասկանալու, թե ինչ հնարավորություններ կարող են ստեղծվել Հայաստանում նրանց գործունեության շարունակականության ապահովման ուղղությամբ»,- եզրափակել է նախարար Ժաննա Անդրեասյանը:

Ռոմանոս ՄԵԼԻՔՅԱՆ - 140

Գեղարվեստական ռոմանսի չգերազանցված վարպետը

Կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական հասարակական գործիչ Ռոմանոս Մելիքյանը հայկական երաժշտական ստեղծագործության պատմության մեջ հայտնի է որպես գեղարվեստական ռոմանսի չգերազանցված վարպետ:

Ռոմանոս Մելիքյանը ծնվել է 1883թ. հոկտեմբերի 1-ին, Հյուսիսային Կովկասի Ղզլար քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Նոր Նախիջեւանի հայկական դպրոցում, որտեղ աշակերտել է Գեւորգ Չորեքչյանին՝ ստանալով նրանից երաժշտական առաջին գիտելիքները եւ նրա ղեկավարությամբ կատարել ստեղծագործական իր առաջին փորձերը:

Պատանի Ռոմանոսը այդ տարիներին եռանդուն կերպով ծանոթացել է հայ հոգեւոր, գեղջկական եւ քաղաքային ֆոլկլորին, եւ սկսել է դրանց մշակելու առաջին փորձերը: Սկսել է նաեւ իր ուսուցչի հորդորներով աշխատել երգչախմբի հետ, ինչպես նաեւ նշանակվում է Սուրբ Գեւորգ եկեղեցու երգչախմբի ղեկավար: 1900թ. Ռ.Մելիքյանն իր ծննդավայրում տալիս է իր անդրանիկ համերգը՝ կատարելով գերազանցապես ազգային - հայրենասիրական երգեր, արժանանալով բուռն ընդունելության: 1902թ. ավարտելով թեմական դպրոցը Ռ.Մելիքյանը ընդունվում է Ռոստովի երաժշտական ուսումնարան եւ ձեռք բերում ավելի հիմնավոր գիտելիքներ:

Թեեւ նյութական դժվարություններին ուսումնարանը ավարտելուց հետո Ռոմանոսը մեծ ցանկություն է ունենում ուսումը շարունակել կամ Մոսկվայում կամ Պետերբուրգում: Եվ 1905թ. մեկնում է Մոսկվա: Անցնում է աշխատանքի Լազարյան ճեմարանում՝ որպես ուսանողական երգչախմբի ղեկավար, շփվում եւ մտերմանում է հայ մտավորականների հետ, հատկապես Վ.Տերյանի, Ա.Մյասնիկյանի, Ալ. Ծատուրյանի հետ, խորամուխ լինում Ռուսաստանում տիրող հեղափոխական իրադարձություններին:

Ապրելով ռուսական երաժշտական մշակույթի խոշոր կենտրոնում, շփվելով նշանավոր երաժիշտ-գործիչների հետ, հաճախելով համերգներ եւ օպերային ներկայացումներ՝ Մելիքյանը ձեռք է բերում նորանոր գիտելիքներ, հարստանում նորանոր տպավորություններով եւ այդ ամենը օգտագործում իր ստեղծագործական աշխատանքի ընթացքում:

1905-1906թ. Ռ Մելիքյանը մասնավոր դասեր է առնում պրոֆեսոր Բ. Յավորսկուց եւ կոմպոզիտոր Իպալիտով - Իվանովից:

Հաջորդ տարի Մոսկվայում բացվում է ժողովրդական կոնսերվատորիան, որտեղ աշխատանքի են հրավիրվում արդեն հայտնի դասախոսներ Ս.Տանեեւը, Բ.Յավորսկին, Ա.Գոլդենվեյզերը, Կ.Սարաջեւը եւ ուրիշներ, ուր Ռ.Մելիքյանը շարունակում է իր պարապմունքները կոմպոզիցիայի եւ տեսության դասարաններում:

Ուսումնառության տարիներին նա շարունակում է փորձեր կատարել ժողովրդական երգերի մշակման ուղղությամբ, գրում է իր առաջին ռոմանսները եւ խմբերգերը: Ուսանողական այդ գործերում արդեն զգացվում է կոմպոզիտորի նուրբ ճաշակն ու լիրիկական խորությունը:

Դա ցայտուն կերպով երեւան է գալիս Վ.Տերյանի խոսքերով գրված երկերում՝ *«Աշնան երգե ռոմանսում , «Մի լար, մի լար»* Լերմոնտովի խոսքերով, *«Գյուղը», «Երեկո»* ռոմանսները:

Իհարկե կոմպոզիտորի վրա դեռեւս ուժեղ էր ռուս կոմպոզիտորների՝ հատկապես Պ.Չայկովսկու, Բորոդինի ազդեցությունը:

Ավաղ Ռ.Մելիքյանի ուսումը ընդհատվում է ոչ միայն նյութական դժվարությունների, այլեւ հիվանդության պատճառով եւ նա տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ նա կոմպոզիտոր, խմբավար Ազատ Մանուկյանի հետ ծավալում է երաժշտա-հասարակական աշխատանքներ:1908թ. կազմակերպում են *«Երաժշտական լիգա»* ընկերությունը, որի գլխավոր նպատակն էր՝ դպրոցներում կարգավորել երաժշտության դասավանդումը, ստեղծել եւ մասսայականացնել նորանոր երգեր, կազմակերպել երգչախմբեր, հրատարակել ձեռնարկներ, կազմել ժողովածուներ, ձեռնարկել մանկական օպերային ներկայացումներ: Այս բոլոր ձեռնարկումներում Մելիքյանը ունենում է գործուն մասնակցություն: Նա միաժամանակ գրում է նոր ստեղծագործություններ: Այս շրջանին են պատկանում *«Վարդը»* երգ-ռոմանսը՝ Գյոթեի խոսքերով, թարգմանությունը Հ.Թումանյանի, *«Ուռենի»* զուգերգը՝ Ա.Խնկոյանի խոսքերով, կատարում է բազմաթիվ ժողովրդական երգերի մշակումներ:1912թ.լույս է տեսնում *«Էսքիզներ»* խորագրով ժողովածուն, որտեղ ընդգրկված էին *«Լուսնյակ գիշեր», «Կոտ ու կես», «Անձրեւն եկավ», «Ինչու Բինգյոլը մտար», «Աղջկերք պար բռնեցեք»* ժողովրդական երգերի մշակումները: Այս երկերում կոմպոզիտորը իր ուշադրությունը բեվեռում է՝ մի դեպքում հարմոնիայի հարստացմանը, մյուս դեպքում՝ երգի ռիթմի սրմանը, բովանդակության խորացմանը:

Որքան շատ էր Ռ.Մելիքյանը խորանում ստեղծագործական եւ երաժշտական հասարակա կան աշխատանքներում, այնքան ավելի զգալի էր դառնում նրա համար մասնագիտական ուսումը շարունակելու անհրաժեշտությունը: Նա ընդունվում է Պետերբուրգի կոսերվատորիա եւ սովորում Ա Գլազունովի, Ա.Լյադովի եւ այլ նշանավոր երաժիշտների մոտ: Տարիներ անց Ռ.Մելիքյանի կոմպոզիցիայի պրոֆեսոր Սոլովյովը բարձր կարծիք է հայտնում իր ուսանողի մասին. *«Դուք ունեք զարմանալի վառ տաղանդ, ցայտուն անհատականություն ու քնքուշ քնարականություն»:*

Վ.Տերյանի խոսքերով Ռ.Մելիքյանը ստեղծում է *«Աշնան տողեր»* շարքը: Այն հանդիսանում է նախախորհրդային տարիների հայ վոկալ ստեղծագործության նշանակալից նվաճումներից:

Դժբախտաբար, այս անգամ էլ չհաջողվեց ավարտին հասցնել իր մասնագիտական կրթությունը: 1914թ. Մելիքյանը վերադառնում է Թիֆլիս եւ ակտիվ գործունեություն ծավալում հայոց Երաժշտական Ընկերության աշխատանքներում:

Այստեղ բյուրեղանում է կոմպոզիտորի ստեղծագործության ազգային ոճը, նա թեւակոխում է հասունության շրջան՝ կերտելով իր գլուխգործոցներից՝ *«Զմրուխտի երգը»* ռոմանսների շարքը:

Այն բաղկացած է ութ երգ - ռոմանսներից, որոնք գրված են Հ.Թումանյանի, Ա.Իսահակյանի Դ.Դեմիրճյանի, Ա.Խնկոյանի խոսքերով:

Կոմպոզիտորի ուսումնասիրություններ-

ը եւ պրպտումները հանգեցնում է ժողովրդական երաժշտության տարբեր հատվածների՝ գեղջկական, աշուղական, քաղաքային առանձնահատկությունների միակցմանը՝ գաղափարին, ինչն էլ փայլուն կերպով իրագործել է *«Զմրուխտի»* ապա *«Զառ-վառ»* երգաշարերում:

Կոմպոզիտորին հաջողվել է իրենց բնույթով տարբեր երկերում ընտրել մեղեդիական եւ ներդաշնակային այնպիսի միջոցներ, որոնք լիովին համապատասխանում են բանաստեղծական խոսքերին, ավելի ընդգծում ու խորացնում են նրանց լիրիկական բովանդակությունը: Կոմպոզիտորը այդ ութ երգերից յուրչաքանչյուրի համար գտել է ռիթմական, հնչերանգային, հարմոնիկ այնպիսի տարրեր, որոնք կազմելով կուռ ամբողջականություն, ստեղծում են գեղարվեստական կատարյալ կերպարներ: Դրանից խոր դրամատիկական *«Մի լար»*-ի կողքին դրված է *«Շափաղ կուտաս»* լիրիկական ռոմանսը, *«Մանուկն ու ջուրը»* նկարագրական երկխոսությունը, *«Սեւ կաքավիկ»* վշտալից երգը *«Օիլ-օիլ»*-ի հրճվալի կատակերգը կամ քնքուշ-քնարական *«Օրորը»:*

«Զմրուխտի» շարքը խոշոր ներդրում է հայկական դասական երաժշտության գանձարանում, որը ուղենիշ հանդիսացավ հայազգի կոմպոզիտորների համար:

Ցեղասպանությունից տուժած հայերին օգնելու նպատակով՝ 1916թ. Թիֆլիսից հայ մտավորականների մի պատվիրակություն մեկնում է Արեւմտյան Հայաստան՝ Վան քաղաք: Պատվիրակության կազմում էր նաեւ Ռ. Մելիքյանը: Կոմպոզիտորն ականատեսը եղավ հայերի նկատմամբ անմարդկային վերաբերմունքին, բայց հենց այդ պայմաններում հաջողվեց ունկնդրել եւ ձայնագրել ժողովրդական երգերի հիանալի նմուշներ՝ կորստից փրկելով դրանք:

Կոմպոզիտորի համար կարեւոր իրադարձություն էր նրա հեղինակային անդրանիկ համերգը, որը կայացավ 1920թ. սեպտեմբերին, Թիֆլիսում:

Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո, չնայած երկրում տիրող ծայրահեղ ծանր վիճակին, 1921թ. դեկտեմբերի 22-ին Երեւանում բացվում է երաժշտական ստուդիա, անմիջապես տասն ամիս անց Երեւանի ժողովրդական համալսարանից հետո: Հայաստանի ժողկոմխորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի հրավերով Երեւան է ժամանում Ռոմանոս Մելիքյանը եւ նշանակվում երաժշտական ստուդիայի, ապա կոսերվատորիայի առաջին տնօրենը (1921-24թթ.): Նրա հետ է ժամանում կինը՝ իր գործի աջակիցը՝ երգչուհի, դաշնակահարուհի Արուս Բաբալյանը:

Երաժշտական ստուդիային մեծ ուշադրությամբ էին վերաբերվում Լուսժողկոմի ղեկավարները, արվեստի բաժնի ղեկավար, տաղանդավոր պոետ Եղիշե Չարենցը: Իսկ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանը երաժշտական ստուդիայի բացումը *«օրհնում»* է գրատախտակին իր ձեռքով հնգագիծ նկարելով:

Ահա թե ինչ ձեւակերպում է տալիս երաժշտական ստուդիային ինքը, Ռոմանոս Մելիքյանը. *«Ստուդիան դա հայ երաժշտության լաբորատորիա է, ուր պետք է ազնվանա մեր արվեստը, ուր պետք է որոնվի եւ հայտնաբերվի հայ նոր երաժշտության ինքնություն ոճը-ոգին, հիմք ունենալով ժողովրդի ստեղծագործ արժեքները»:*

Ռ.Մելիքյանի *«Զառ-վառը»* 18 երգերից բաղկացած շարը նվիրված է հայրենի երկրին, բնության փառաբանմանը, պատկերներ ժողովրդի կենցաղից:

Այս շարում իշխում է կենսախինդ տրամադրություն, լուսավոր պայծառ գույներ: Շարքի տեքստերը վերցված են ժողովրդական բանահյուսությունից, նաեւ Հ.Թումանյան, Ա.Խնկոյան, կան նաեւ անհայտ հեղինակներ: *«Զառ - վառ»* երգերը քնարական երգեր են, պարերգեր եւ կատակերգեր:

Դրանց վառ օրինակներն են *«Սիրուն գիշեր», «Լուսինն եկավ»* ինչպես նաեւ գարնան գալու հետ՝ *«Օիտիկի սերը», «Արտուտիկը», «Առուն ու աղբույրը»:*

Երգ - պարի օրինակներ են *«Պսակ - պսակը», «Կլոր պարը», «Դափ դափի դափը», «Հա դան-դանին»:* Կատակերգերը, *«Աղվեսը», «Ախ ինչ կլինի», «Ոսկերիչ Ղազարը»,* պատկերավոր երաժշտական գողտրիկ կերպարներ են (խոսքերը՝ ժողովրդական):

Երգը, ռոմանսը դաշնամուրի նվագակցությամբ, ձեւի փոքր մասշտաբի, բանաստեղծական խոսքի միջոցով, կերպարների շնորհիվ այս ժանրը, հատկապես երգը արգորեն լայն տարածում գտավ, եւ մեծ դեր խաղաց պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի ձեւավորման գործում:

Ռոմանոս Մելիքյանի երգերն իրենց կերպարային արդիականացմամբ, բովանդակությամբ՝ հարազատ մնալով ժողովրդական երաժշտության ոգուն եւ ոճին ապահովեց դրանց լայն ժողովրդականությունը:

Կոմպոզիտորը իր երաժշտա-հասարակական բուռն գործունեությանը զուգընթաց շարունակում է ստեղծագործական աշխատանքը, հղկում եւ հրատարակության է հանձնում *«Զմրուխտի»* երգաշարը (1928թ.) ավարտում է *«Զառ - վառ»* երգաշարը, հրատարակում երկու մանկական երգերի ժողովածուներ:

Ռոմանոս Մելիքյանը ապրեց ոչ երկար, բայց հագեցված գեղեցիկ կյանք եւ երկրային կյանքից հեռացավ Թբիլիսիում 1935թ. մարտի 3 -ին:

Գրիգոր Շարբաբչյան. Ռոմանոս Մելիքյանը հայկական ժողովրդական երգ գրառելիս

Դավիթ ՂԱՋԱՐՅԱՆ
Հայաստանի երաժշտական
ընկերության նախագահ, պրոֆեսոր

Գրախոսություն

Հայ բառարանագրության նոր էջ

Հայ բառարանագրությունը հարուստ ավանդույթներ ունի, որ սկզբնավորվել է դեռեւս 17-րդ դարից եւ իր զարգացմանն է հասել Վենետիկի Մխիթարյան Միաբանությունում: Լեզվաբանական բառարանների շարքում իրենց ուրույն տեղն ունեն ռուս-հայերեն թարգմանական բառարանները, որոնց գործնական նշանակությունը կարեւորվում է միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից: Այդ առումով հայ իրականության մեջ արժեքավոր ներդրում ունեն Հարություն Դաղբաշյանը (Լիակատար բառարան ռուսերենից հայերեն, Թիֆլիս, 1903), Արարատ Ղարիբյանը (Ռուս-հայերեն բառարան, Երեւան, 1968), ընդգրկած բառակազմով եւ գործնական նշանակությամբ արժեքավոր է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հեղինակային խմբի հրատարակած աշխատանքը (Ռուս-հայերեն բառարան, հհ. 1-4, Երեւան., 1954-1958) եւ այլն:

Ժամանակակից թարգմանական բառարանների շարքում նորություն է պրոֆեսոր. **Վաղարշակ Մադոյանի** կազմած երկհատոր բառարանը (В.В. Мадоян, Русско-армянский словарь-универсал для специалистов, հհ.1-2, Երեւան, *«Անանիա Շիրակացի»* հրատարակչություն, 2023թ.), որ ընդգրկում է արդի ռուսաց լեզվի հիմնական բառաֆոնդը՝ մեկնաբանված համակողմանիորեն՝ ուղղագրական, իմաստաբանական, բառակազմական, ստուգաբանական, ձեւաբանա-շարահյուսական, ոճաբանական, գործառական եւ այլ առումներով, տրված են գլխաբառերով կազմված դարձվածքները, առած-ասացվածքներն ու ասույթները եւ այլն:

Արդի հայ բառարանագրության մեջ սույն աշխատանքը համապարփակ թարգմանական բառարանի առաջին փորձն է. այն պարունակում է ավելի քան 110.000 բառ ու բառակապակցություն եւ ընդգրկում է արդի ռուսերենի կենսունակ գրեթե ամբողջ բառային կազմը: Բառարանի համապարփակ անվանումը հիմնավորված է. այն ներկայացնում է արդի ռուսերենի բառերի բոլոր հատկանիշներն ամբողջությամբ:

Գրախոսվող բառարանը գրված է ժամանակակից բառարանագրության տեսության սկզբունքների հիման վրա:

Բառարանի հիմնական բաղադրիչներից է *բառացանկը,* որ համալրված է նորագույն բառերով, որոնք կապված են համացանցի եւ տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման հետ: Բառարանն ունի ուսուցողական արժեք. այն տալիս է գլխաբառից սերող մյուս միավորները՝ դառնալով *բառակազմական* բառարան, տրվում է նաեւ *փոխառյալ բառերի* աղբյուրը, ինչպես նաեւ նրանից (փոխառությունից) սերած նորակազմությունները: Բառարանում հանդիպում են բարբառներից գրական լեզու ներթափանցած բառեր, որոնց բառակազմությունը, հնարավոր է, բարբառներում աղավաղվել էգ հեղինակը նման կարգի բառերը համարում է արմատական: Օրինակ, остолоп բառը, անցնելով գրական լեզու, կրել է հնչյունական փոփոխություններ, այդ պատճառով այն ներկայացված է որպես ամբողջական արմատ: Որոշ դեպքերում, տեսության անբավարար լինելու պատճառով հեղինակն իրեն իրավունք է վերապահում առաջ տանելու իր տեսակետը՝ որպես նախընտրելի տարբերակ (օրինակ, -ова վերջածանցի մեկնաբանությունը՝ -ов-, -а- եւ այլն):

Բառահոդվածի կարեւոր բաղադրիչն է *իմաստի բացատրությունը,* որ սույն բառարանում տրված է բառարանագրության մեջ ընդունված սկզբունքներով՝ բառերով, հոմանիշներով, բառակապակցություններով եւ նախադասություններով: Բառիմաստի թարգմանության դժվարությունն այն է, որ ռուսերենում եւ հայերենում իմաստային ողջ ծավալով համընկնումներ գրեթե չկան, ինչը հեղինակին ստիպում է որոշակի դեպքերում լրացուցիչ բացատրություններ տալ, ինչպես՝

ВО[ДРУЗ]//И'|ТЬ [въдруз´и'т'], *բ.* 2b, водружу', -узи'шь, *կատ, что, վեհ.* **Ամբարձել,** բարձրացնել, բարձր տեղում ամրացնել:

[ВОД]ЯН//О'Й1[въд'ино'й], *գ.ա.*107, *առսպ.* **Ջրային ոգի,** ծովարքա՝ ջրում ապրող ծերուկ, ջրի տերը (սլավոնների դիցաբանության մեջ): *Бояться водяного. – Ջ. ոգուց վախենալ:*

АУТОПСИ'//Я [ЛутЛпс'и'jъ], [*ֆր.* autopsie < *հուն.* autos, opsis *«տեսնելը»*], *գ.ի.*169. Դիահերձում (մահվան պատճառները պարզելու համար): *Прибегнуть к аутопсии.– Դիահերձման դիմել:*

Հեղինակը բառիմաստի բացատրությունը հաճախ տալիս է՝ ելնելով համատեքստից՝ նկատի ունենալով գլխաբառի բոլոր բաղադրիչները: Բառարանում թարգմանվում են լայն գործածություն ունեցող բառերը, իսկ նեղոլորտ բառերը (նոր փոխառություններ, ոչ պարզ պատճենումներ ու նորաբանություններ) միայն մեկնաբանվում են: Օրինակ՝ АБРАКАДАБР//А ... **Բանդագուշանք՝** բառերի անիմաստ կապակցություն, անհեթեթություն:

Եթե հայերենում չկա թարգմանվող ռուսերեն բառի համարժեքը, կիրառվում են իմաստով մոտ բառեր՝ փոխաբերության եւ փոխանունության սկզբունքով, ինչպես՝ КОНФОРКА (плиты) աչք, ПЛИТА պլիտա, օջախ, ПЛёхС նավահուն: Տե՛ս՝ АУТОДАФЕ' [ЛфтъдЛфэ'], [*ֆր.* **auto-de-fn** < *պորտ.* **auto-de-fn** <*լատ.* actus fdei *«հավատքի գործ»*], *գ, չ, չիկվ.* **Աուտոդաֆե,** հրադատություն՝ միջին դարերում հերետիկոսների եւ հերետիկոսական գրականության հրկիզում հանրության աչքի առջեւ: *Устроить а. — Ա. սարքել:*

Բառարանի անդրլեզվի հիմնական բաղադրիչներից է *ստուգաբանությունը,* ինչպես՝ АФФЕ'КТ [Лф´е'кт], [*ֆր.* affect < *լատ.* affectus *«կիրք, հուզմունք»*]: АЦЕТА'Т [Лцыта'т], [*գերմ.* Acetat < *լատ.* acetum *«քացախ»*]: АШУГ [Лшу'к], [*թյուրք.* aşyk *«սիրած»*]:

Եթե փոխառությունը միջնորդավորված է, ապա հեղինակը տվյալ բառի ստուգաբանությունը ներկայացնում է նաեւ նրա անցման միջանկյալ օղակով, ինչպես՝ А'ЗИ¬МУТ – անգլ.[azimuth < արաբ. assumut *«ուղիներ»*], АЭРО|ПО'РТ [ЛэрЛпо'рт], [*ֆր.* **anroport** < *հուն.* aer «**aur**» *port. «նավահանգիստ»*] եւ այլն: Բառարանի հեղինակը իրավացիորեն խուսափել է հնագույն փոխառություններն ստուգաբանելուց, մանավանդ եթե դրանց ծագումնաբանությունը հստակ չէ կամ կասկածելի է: Ստուգաբանության հարցում հեղինակի մոտեցումները որոշ դեպքերում տարբերվում են արդի ռուսագիտության մեջ ընդունված տեսություններից: Օրինակ, արդի ռուսագիտությունը формировать եւ формовать բառերում տեսնում է форм արմատը եւ մնացած վեջածանցները. իրականում, ինչպես նշում է հեղինակը, формировать բայը



փոխառություն է գերմաներենից, իսկ формовать – ֆրանսերենից:

Անդրլեզվի բաղադրիչ է գլխաբառի *ձեւաբանական բնութագիրը:* Անուն խոսքի մասերը տրված են սեռի, թվի եւ հոլովի քերականական կարգերով, բայ խոսքի մասի առումով տրված են թվի, ժամանակի, կերպի եւ այլ կարգեր: Գոյականի, ածականի, դերանվան եւ բայի անցյալի ձեւերի համար նշվում են անվանական սեռի կարգերը (արական, իգական եւ չեզոք) եւ այլն: Գլխաբառերի ձեւաբանական հարցերի ամբողջական պատասխանը տալիս են *ձեւափոխման աղյուսակները,* որոնց օգնությամբ կարելի է որոշել ցանկացած բառի թեք ձեւերը, եթե ճիշտ տեղադրվեն վերջավորությունները, շեշտը, հաշվի առնվեն՝ ե՛ւ ձայնավորների սղման դեպքերը (песок — песка, лямка — лямок): Եթե բաղադրյալ բառի (հարադրության) բաղադրիչները հոլովվող ձեւույթներ են, ապա յուրաքանչյուրի հոլովումը նշվում է առանձին, ինչպես БАБА-ЯГА, գ, ի, եզ, կամ տրվում է յուրաքանչյուր բառին կից՝ БАБА (գ, ի) – ЯГА (գ, ի), եզ., կամ գ, ի, (БАБА), գ, ի, (ЯГА):

Ռուսերենի բառային կազմի *շարահյուսական հարցերը* մեկնաբանվում են բայ խոսքի մասի առնչությամբ, որ վերաբերում է նրա խնդրառությանը, անհրաժեշտության դեպքում նշվում են նաեւ բառերի շարահյուսական պաշտոնները: Հեղինակն ըստ անհրաժեշտության անդրադարձել է բազմիմաստ բայերի իմաստի տարբերակման հարցերին (որոշակի կապակցություններում)՝ դրանք պայմանավորելով լրացումների (խնդիրների) գործառական դերովգ ուստի բացատրություններում վերջիններս տրվում են իմաստի համարակալումից անմիջապես հետո: Օրինակ, [БАЮ'К]А//ТЬ [бЛjу´кът'], *բ.* Ia -аю, -аешь, *անկատ, кого-что-* Օրորել, նանիկ ասելով, օրոր ասել, քնեցնել: *Б. младенца.– Մանուկին օ.:*

БИ//ТЬ, 1. *во что, как, чем* - Խփել, ծեծել: Б. в дверь кулаком. – *Բռունցքով դուռը ծեծել:* փխբ. Свет бёт в глаза. – *Լույսը աչքերիս է խփում:* 2•*во что.* Խփել, թմբկահարել, զարկել: Б. в барабан. - Թմբուկ զարկել:

Գլխաբառերի բացատրությունն ուղեկցվում է *ոճական* բնութագրի նշումով, տրվում են նաեւ նրանց գործածության բնագավառները, ինչպես՝ *պտմ.* (պատմական), *ճրտ.* (ճարտարապետական), *բսբ.* (բուսաբանական) եւ այլն:

Բառարանում տրվում է նաեւ բառի *արտասանությունը* ՝ տառակապակցությամբ, քառակուսի չակերտներումգ ռուսերենի դասական տառադարձությունը զգալիորեն պարզեցված է, հարմարեցված հայ ընթերցողին: Արտասանությանը բնորոշ երեւույթ է *շեշտի* գործոնը. այն վերաբերում է միայն գլխաբառի ուղիղ ձեւին, օրինակ՝ ВО'ДК//А, մնացած դեպքերում շեշտը որոշվում է ըստ համապատասխան ձեւափոխության աղյուսակի, որ զետեղված է բառարանի վերջում: Եթե բաղադրյալ բառերն ունեն երկու շեշտ, դրանք նշվում են համապատասխան շեշտակիր ձայնավորների վրա, ինչպես՝ КО' Е-КТО' եւ այլն:

Բառահոդվածը եզրափակում են ≈J նշանից հետո տրված նախադասությունները, դարձվածքները, առածները, թեւավոր խոսքերը, բառերի փոխաբերական գործածությունները, բարդ նախդիրներըգ հեղինակը դրանք փորձել է թարգմանել ըստ իմաստային համարժեքների, եթե հայերենում կան դրանց համապատասխան արտահայտությունները: Օրինակ՝ сидеть сложа руки - *ձեռքերը ծալել նստել,* поднять голову – *գլուխ բարձրացնել, պայքարել,* мух давить – *կոնծել, օդի խմել* եւ այլն: Եթե ռուսերեն դարձվածքի համարժեքը հայերենում չկա, այն թարգմանվում կամ բացատրվում է, օր. лезть на рожон – *ձեռնարկել անիմաստ, անհաջողության ենթակա գործողություն:*

